Մ. Սարգսյանը նկատեց, որ իրենց համերգներով, ասես, դեսպանորդներ են եղել թե՛ օտարազգիների մոտ եւ թե՛ հայազգի հանդիսականի առջեւ: Սփյուռք լավ չի ճանաչում հայ արվեստը, հեռանում է իր արմատներից, երաժշտական ճաշակը գնալով աղճատվում է՝ ցավով արձանագրեց նա՝ հավելելով, որ անգամ մեկ-երկու համերգով կարողանում

«Սովորական խոսակցության ժամանակ հաճախ մեմ իրարու լավ չենք հասկանում, մեր ասածը սխալ մեկնաբանությունների տեղի կարող է սալաստում է Սարգարիս Սարգսյանը՝ իսկ երաժշտությունը նման սարքերիցումները բացառում է: Ահա թե ինչու երաժշտությունն այն ունիվերսալ, համադարձակ լեզուն է, որով մարդիկ ինձ ճիշտ են հասկանում»:



ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Վան Արյան» հրատարակչությունը լույս ընծայեց Հովհաննես Կարապետյանի «Իսկ ուր է քո՞ խարիսխը» գրքույկը

Հեղինակը համարում է, որ լեզու է ակնազալուր լինել մեր մեծերին, հետեւել նրանց խորհուրդներին, որով մասնաճանաչված են նրանց գրական երկերում: Ահա մեր մեծանուն գրող Հրանտ Մաթեոսյանը նույն է. «Եթե ծով ես դուրս եկել ու խորհակվելու վստահ կա, ապա մեղավորը փոթորիկը չէ, այլ դու, որ հարկ չես համարել խարիսխ վերցնել»:

հայ են համարել, մշակույթի գին վել են, դաստիարակվել ամեն կերպ դիմագրավելու թեմանում: Գրքույկում անդրադարձ կա նաեւ անցած դարասկզբին կատարված ողբերգական իրադարձություններին, նվիրյալներին, ովքեր ստանձնեցին հայ որբերին խնամելու շնորհակալ գործը, մեր օրերում թեմանում դեմ հայ գինվորի մղած սխրանքին, մշակույթին, նրա դաստիարակության անհրաժեշտությանը:

Լույս տեսավ «ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆ» Աւխասաիրությանը՝ ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ Մեկնաստությամբ՝ Թեմայան Մշակութային Սիության Մ. Նահանգների եւ Կանադայի կենտրոնական վարչության Հրատարակիչ՝ «Ամսարես» հրատարակչառում Երեւան, 2025 թ., 415 էջ:

Մերայն խառնակ ժամանակներում Հայաստանը դժվարանում է ելք գտնել եւ ճիշտ կողմնորոշվել դեմոկրատիայի, հարավ, արեւմուտք, թե արեւելք ընթացող հարցում:


ԱՐԾԿԻ ԲԱՆՉԻՆՅԱՆ

Արդեն երեք տասնամյակից ավելի է, ինչ երեւանաբնակ թարգմանիչ **Արամ Օհանյանը** «Շփացնում է» ռուսալեզու ընթերցողին անգլիալեզու գրականությունից կատարած բարձրակարգ թարգմանություններով: Սակայն նա այն էջաթիվ թարգմանիչներից է, որոնք մանրակրկիտորեն ուսումնասիրում են թարգմանվող հեղինակին եւ գործը՝ դառնալով սկյալ գործի եզակի մասնագետ՝ թարգմանական հասոյներն օժտելով արժեքավոր նախաբան կամ վերջաբան-ուսումնասիրություններով: Ասվածը, համեմայն դեղս, ճճարիս է Վիլյամ Սարոյանի կաղակցությամբ: Սկսած 2003-ից, Մոսկվայում եւ Սանկտ-Պետերբուրգում Օհանյանի ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է Սարոյանի ստեղծագործությունների ամբողջ հատը: Տասնմեկերորդ վերջերս Պետերբուրգում «Մի թատերախաղի թանգարան» շարժվ լույս տեսած Սարոյանի թերեւս ամենահայտնի՝ «The Time of Your Life» դիւսի հրատարակությունն է (Уильям Сароян, «Годы вашей жизни», Музей уникальных вещей (Фонд АХ культуры), 2025):

Սկսեցիմք, որ Արամ Օհանյանը թատերախաղի վերնագիրը թարգմանել է «Ձեր կյանքի տարիներ», ոչ «Ձեր կյանքի ժամանակը» կամ «Ձեր կյանքի ժամեր», ինչպէս հայերենի դեղմում (իսկ ռուսերեն նախկինում թարգմանվել է «Ձեր կյանքի ուղին»՝ «Путь вашей жизни»): Իրականում այս վերնագիրը տարբեր լեզուներով նույնպէս ազատ թարգմանություններ է ունեցել, ինչպէս, իտալերեն «I giorni della vita»՝ «Կյանքի օրեր», լեհերեն «Zabawa jak nigdy»՝ «Չվարճացիր ինչպէս երբեք» եւ ֆիններեն «Elämäsi parhain aika»՝ «Կյանքիդ լավագոյն ժամանակը»:

Սարոյանի այս ընտրանքը գործերից մեկը դարձյալ կարգալու հաճույքից բացի սույն հատըն այլ բավականություններ էլ է դասառում ընթերցողին: Թարգմանիչ իմնասիղ հավաքածուից վերցված փաստագրական այլեայլ նյութերը գիրքը դարձնում են շատ ավելի, քան գեղարվեստական գործի թարգմանությունը: Ժամանակի մանուկից «դեղված» երգիծանկարներ, Սարոյանի եւ դիւսի առաջնախաղի լուսանկարներ, ընդ որում, այդ լուսանկարներն ընդգրկող էջերի դարձերեսներին տեղ են գտել նաեւ դրանց հակառակ կողմում կատարված գրա-

# Արամ Օհանյանի ինքնատիպ սարոյանապատումը



ռումները:

Այս տեսողական հազվագոյն նյութից բացի չափազանց ուշագրավ են հավելվածում առկա նյութերը: «Սկզբնաատերն՝ ինչպէս Շեքսպիրին՝ W. S. կամ Սարոյանի միտերիան» վերնագրված հոդվածում Արամ Օհանյանը հանդես է եկել որպէս հմուտ բանասեր եւ գրականագետ, որին, թվում է, անծանոթ չի մնացել Սարոյանի «Ձեր կյանքի տարիներ» գործին առնչվող հեղափոխ կամ մոտ որեւէ իրողություն: Մանրամասն սրված է թատերախաղի ստեղծման դասնությունը՝ ժամանակի մանուկի վկայակոչումների հիման վրա, Փոլիցերյան մրցանակի արժանանալու եւ գրողի՝ դրանից հրաժարվելու դասնությունը, աշխարհի տարբեր թատրոններում բեմադրվելը, ամերիկյան ու համաշխարհային գրականության հետ զուգահեռները: Ընթերցողը բազմաթիվ հետաքրքրաշարժ մանրամասներ է բացահայտում: Օրինակ, Օհանյանը ենթադրում է, որ դիւսի հանրահայտ նախաբանը կարող է ազդած լինել Անտուան դը Սենտ-Էլյուարի «Փոքրիկ իւլիանի»՝ «Դու դասախոսանաւու ես նրանց հանդեմ, ում ընտելացրել ես» նշանավոր տողի հետ, սակայն, զսնելով, որ «չարժե գուշակել, թե այն ոգեւնչման աղբյուր է եղել Էլյուարի համար» (Уильям Сароян, Годы вашей жизни, էջ 157): ԱՄՆ-ում Սարոյանի այս գործը ժամա-

նակին համարել են Գորկու «Հասարակում»-ի ամերիկյան տարբերակը: Թարգմանիչն իմր թատերախաղի առաջաբանի մտերը զուգահեռել է Նիկոլայ Օստրովսկու «Ինչպէս է կոչվում դողդաջը» վեղի՝ մարդու կյանքի վերաբերյալ կատարված խորհրդածություններին, սակայն անմիջապէս զգուշացնելով, որ «հակված չեն մտածել, թե Սարոյանը կարող էր Օստրովսկուց ազդված լինել: Ավելի շուտ, տեղեկի մանությունը բացատրվում է այն հանգամանակով, որ երկուսի աղբյուրն էլ նույնն է՝ Ասվածաշունչը» (նույն տեղում, էջ 166. ասվածաշունչյան հղումը վերաբերում է Ժողովրդի գրիմ): Եվ կամ, Արամ Օհանյանը նշում է, որ դիւսի հերոսներից Ջոյին հիշեցնող մի հերոս հանդես է բերվել 1940-ին գրված Մյուրեյ Բարնեթի եւ Ջոան Էլիսոնի «Բոլորը գնում են Ռիֆ մոտ» թատերախաղում՝ հանրաճանաչ «Կասաբլանկա» շարժանկարի գրական հիմունք, եւ կատարում է երկու ստեղծագործությունների համեմատություններ:

Ուրիշ հետաքրքրական իրողություններ: Պարզվում է, որ 1955-ին դիւսի հերթական բեմադրության մեջ Մերի դերը կատարել է Սարոյանի կինը՝ Զերոլ Մարիուը, իսկ գրողն իմր կատարել է բարի այցելուի անխոս դերը: «Ձեր կյանքի տարիներ» մերթափանցել է լայն զանգվածների մեջ, ժամանակին երգել են «Կհորիմ» Սարոյանը մի զիղ դիւս» խոսքերով մի երգ, Սան Ֆրանցիսկոյում Սարոյանի անունով կոչել են կոկտեյլ, սենդվիչ եւ սալաթ (բաղադրատոմսերը չեն դաժակներ), իսկ Զիլվենդի թատրոնի դերասանուհիներից մեկը, որի աշխատավայրում բեմադրվել է դիւսը, իր կատարումը կոչել է Սարոյան...:

«Ձեր կյանքի տարիներ» արձագանքներ է զսնում մինչ օրս: Բարբա Սթրեյզանդը բեմից կարդացել է այն, իսկ Ջոնի Դեպի հերոս Ջեք Ընդրոկի («Կարիքյան ծովի ծովաւեները. աշխարհի ծայրին») ուսին դաջված է մեջբերում դիւսից՝ «Ամենուրեք փնտրեք բարի»: 2007-ին նկարահանված ամերիկյան «Վերջնական ցանկ» («The Bucket List») ֆիլմի հերոսը կատարում է մեջբերում Սարոյանի դիւսից...:

Պակաս հետաքրքրական իրողություններ չի բացահայտում նաեւ հատըն ամփոփող «Ձեր կյանքի տարիներ»՝

արհեստավարժ եւ սիրողական թատրոններում իրականացված բեմադրությունների ժամանակագրությունը, որն ընդգրկում է 1939-2025 թվականները՝ բավական լայն աշխարհագրությամբ: Թվարկեմք ժամանակագրական հերթականությամբ՝ ԱՄՆ, Շվեդիա, Նիդերլանդներ, Իտալիա, Գերմանիա, Բրազիլիա, Սորվեգիա, Բելգիա, Իսրայիլ, Չեխոսլովակիա, Ֆինլանդիա, Հայաստան (առաջին անգամ՝ 1981-ին), Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Կանադա, Ճապոնիա (մի քանի երկրներում՝ մեկից ավելի անգամ), ինչպէս նաեւ համանուն կինոնկար՝ նկարահանված 1992-ին, «Բելառուս-ֆիլմում»: Այս ժամանակագրությունը նույնպէս լեցուն է անակնկալներով: Օրինակ, դարձվում է, որ 1943-1944 թթ. Ինգմար Բերգմանը բեմադրել է Բենգթ Օլոֆ Ֆոսի «Արթնաւալուց անմիջապէս առաջ» դիւսը, որը գրելու համար հեղինակին օրինակ է ծառայել նախորդ տարի Սոկոլովում բեմադրված «Ձեր կյանքի ժամեր»...:

Ավելացնեմք, որ Արամ Օհանյանի թարգմանությունները լույս են տեսել Հայաստանում, Ռուսաստանում, Բելառուսում, Գերմանիայում եւ Ֆրանսիայում տղագրված 76 հատըներում՝ տարբեր ժողովածուներում եւ առանձին գրերով: Ամենաշատը թարգմանել է Ռեյ Բրեդերիին, որի հետ, ի դեղ, ունեցել է անձնական նամակագրություն: Անգլերենից ռուսերեն է թարգմանել Վահագն Տատրյանի «Հայոց ցեղասպանության դասնությունը» (1996), Մայլ Առլեն-Կրստերի «Ուղեւորություն Արարատ» (Ռյազան, 2003), Աննա Ասվածատրյան-Թերթոթի «Արտախում. Ոչ մի տեղ» (Երեւան, 2016), հայերենից անգլերեն՝ Ադասի Այվազյանի «Աղի կոմսը» (Երեւան, 2005), Լեւոն Խեչոյանի «Սեւ գիրք, ծանր բզեղը» (Լոնդոն, 2008), հայերենից ռուսերեն՝ ստեղծագործություններ Ադասի Այվազյանից եւ Լեւոն Խեչոյանից (լույս են տեսել տարբեր ժողովածուներում), ռուսերենից անգլերեն՝ Վահան Հովհաննիսյանի «Մանդիլիոնը» (Գերմանիա, 2014), Արամ Խաչատրյանի «Նամակներ» (Երեւան, 2023)...

Մաղթեմք, որ բեղմնավոր թարգմանիչ մասնագիտությունն էլ ավելի հարստանա եւ հասկաղթե՝ հայ իրականությանը վերաբերող գործերով...

## «Ազատ» խամաճիկային ներկայացման առաջնախաղերը Սան Ֆրանցիսկոյում



ն», որ հետամուտ է կամրջելու միջինարեւելյան մշակույթները, հայտարարում են, որ աղիլի 11-ից մինչեւ մայիսի 3-ը Սան Ֆրանցիսկոյի «Պոսերո» բեմադրախումբում տեղի է ունենալու Սիրիայում ծնված ամերիկահայ թատրոնի եւ կինոյի դերասանուհի՝ **Սոնա Թաթոյանի** հեղինակած «Ազատ» (Ճագարն ու գայլը) դիւսի առաջնախաղը, որը ճայնի, գրաֆիկայի, շարժաղակներում եւ տեղեկագրությամբ բազմապէս ու կալիբրոսկոպիկ ստեղծագործություն է: Ըստ «Միրո Սիւեթթերի», Սոնան այս ծրագիրը իրականացրել է՝ համագործակցելով երկու անգամ «Օրի» մրցանակի արժանացած թատրոնի սնորհ եւ մուլտիմեդիա բնագավառի համակարգող **Ջարեդ Սեցոչի**ի հետ: Ներկայացման մեջ միախառնվում են վաղ անցյալի «դարազոյգ» (կարագոյգ) սվերային խամաճի-

կության եւ միջինարեւելյան ժողովրդական բանահյուսության տարրեր: Թաթոյանն իմրն է խաղացնում 120 տարեկան խամաճիկներին աշխարհահռչակ ուղեւորող **Արա Դինգճյանի** նվագախումբով: Սիրիական դասերազմի ժամանակ Սոնան Հալեթի իրենց լված ընթացական սանը իրեն «ծանծաղուսի մեջ խրված» է զգացել՝ բացի անձնական վեցից, մեծաղթե ազդվել է նաեւ իր մոտիկ ընկերոջ՝ մարդու իրավունքների թուրք անխոնջ դասաղան՝ **Օսման Կավալայի** ձերբակալությունից: Պատմական սրվմայի եւ մերօրյա ողբերգությունների համատեղումն նա անսղատիլորեն զսնում է իր աղուղաղթերի դասաղան եւ Եղեռնից փրկված ձեռագործ «կարագոյգներ», որոնց արեւելյան «Հագար ու մեկ գիւտերվա» ոգով վերակենդանացնում է՝ հո-

գեւոր կաղ հաստեղծված անցյալի ու ներկայի սերունդների միջեւ եւ փորձելով դուրս գալ «ծանծաղուսից»:

«Ազատը» անընկճվածություն եւ ճկունություն է ներշնչում մեզ եւ մղում համընդհանուր ուժերով բուժելու մեր վերերը եւ հասնելու սոցիալական արդարության: Հղարս ենք ման կարեւոր առաջնություն դարունակող դիւսը բեմ բարձրացնելու համար», նշել է «GTP»-ի գեղարվեստական ղեկավար **Շահար Ասաֆը**:

Պիտում գործում են բազմաթիվ «ղարագոյգներ», որոնք խորհրդանշում են մագաղութ վերաընձյուղվորումն ու տարագիր լինելու հարստեւ փորձառությունը: Այսօր Թաթոյանների ձեղնահարկում հայտնաբերված 120 տարեկան խամաճիկները դարձյալ տարագիր են դարձել՝ ներկա ժամանակների քնահաճ բռնությունների հետեւանում: ⇨ 8

Ամերիկյան «Golden Thread Productions» (GTP) թատերական ընկերությունը, որ նղատակ ունի բարձրաճայնելու բացառաղթե Սիջին Արեւելի մարգինալ խմբերի խնդիրները եւ շահույթ չիտատղորդող «Hakawat: NGO-

**ՅՐԱԶՅԱ ԲԱԼՈՅԱՆ**  
(Յրաշյա Արմենյան)

Բան. գիտ. քննաձու

Օրհորդ Զնփուհին ուսանողուհի է իրականացել է նրա ու նրա ծնողների, անեղների, բոլոր հարազատների, բարին կամեցողների վաղեմի երազանք՝ իրենց դուստրը կամ հարազատուհին ընդունվել է բարձրագույն: Եվ այսպես ամեն առավոտ օրհորդ Զնփուհին հանդիսավորապես գնում է մայրաքաղաքի համալսարաններից մեկը՝ դասի՝ իր հետ վերցնելով առաջին անհրաժեշտության իրերը՝ դամադրա, դուդուկ, մանիկյուր, մաշիս (հոմերի), փոփոկ հայելի եւ էլի նման մի ֆանի բան: Անդաման մեծ է նեղ, որ օրհորդը երբեք անդամաս դասի չի գնում, եթե ոչ մեկ, ադա անդաման կես ժամ դասադասվում է՝ գունավորում է շքունները, մի թեթեւ կարմրացնում այսերը, մուգ սեւացնում թարթիչները եւ այլն: Նրա ու նրա նման ուսանողուհիների բարի բախտից բուհի միջանցքը հար եւ նման է դոդուկուհի, օրվա ընթացքում, երբեք առիթը բաց չթողնելով, օրհորդ Զնփուհին, ինչպես եւ նրա նման ուսանողուհիները, առանձնահատուկ կարգով, նազանով անցնում են այդ դոդուկուհի՝ ի ցույց դնելով իրենց արտաքին բարեմասնություններն ու հասարակական կեցող:

Բուհում համակուրսեցուհիների հետ օրհորդ Զնփուհին զուգում է նորածնությունից, նոր երգերից, ֆիլմերից, դասում իր ու իր ազգականների մասին, լսում ընկերուհիների դասնությունները նրանց ու նրանց ազգականների մասին: Համակուրսեցուհիները չեն օրջանցում նաեւ իրենց դասախոսներից. զույցի ու ֆննարկման հիմնական թեման՝ որ դասախոսը այդ օրը ինչ էր ու կոչիկ է հագել կամ առհասարակ ինչ էր ու կոչիկ է հագնում, ո՞րն է օրը մեջ էր ու կոչիկ փոխում, ո՞րն է օժանելի օգտագործում, օգտագործելու դեղում՝ ինչ


օժանելի, որն ի՞նչ ավստյով է գործի գալիս եւ այլն:

Զնփուհու համար բուհական կյանքի թերեւս ամենահաճելի դրվագներից մեկը կամ գուցե ամենահաճելին ուսանողական երեկոյթներն են՝ զվարճանալու, ինչպես ասում են, իրենց ցույց տալու, ուրիշներին նայելու հոյակապ հմարավորություն: Այս երեկոյթները մի այլ օգտակարություն էլ ունեն ֆանի որ օրհորդ Զնփուհին մեծ ջանք է թափում դասերը սովորելու վրա, ադա մի ֆանի ժամով կսրվում է ուսումնառությունից, դասերից, հանգստանում

սեւական մտավոր աշխատանքից հետո, լիցքաթիվում, ուժ ու եռանդ կուտակում նոր գիտելիքների նվաճման նպատակով մղվելիք գրոհների համար: Հիշյալ գրոհներում նրան օգնության է գալիս համացանցը, օրեցօր կասադոդ համակարգչային տեխնիկան ու արհեստական բանականությունը դրանց շնորհիվ զգալիորեն թեթեւանում է նրա գործը էլ թանկագին ժամանակ չի ծախսում մտելու եւ գրելու համար, մի ֆանի հեղիկ-նազիկ հարված համակարգչի մի ֆանի ստեղծի, եւ տեխնիկայի հրաշքը նրան ընծայում է իր ուզած գրությունը՝ խնայելով ժամանակ մանիկյուր ֆուելու, եղունգները գեղարվեստական մշակման մեթոդները եւ նմանափոխ՝ նրա համար մեծ կարեւորություն ունեցող այլ գործերի համար օրհորդ Զնփուհու բախտը բերել է. նա ծնվել է համակարգչի, համացանցի ու արհեստական բանականության դարում:

Լինում է եւ այնպես, որ մեր ընդ մեր մեր ուսումնական, ուսումնասեմնչ եւ ուսումնաճարավ ուսանողուհին գնում է բուհի ընթացա-

# Օրհորդ Զնփուհի



մուլում են լինում շոքերի, կոչիկների, դայուսակների, գարդերի, բիժուսերիայի, գալանսերիայի, կոսմետիկայի, դարձիւներիայի, սորթերի, բանբաներկաների եւ այլ հանադադրյա ադամներ գեղչեր, ո՞ր գեղեցկության սրահում են մագերը լավ գնով սարում, ներկում, ֆենում, ուրե՞ղ են լավ գնով շքունները հասցանում, կլորացնում, սողադարձ անում, եղունգները ներկում, սաւում, դարձնում սառը գեմ. նույն ճանաչողությունը, սակայն, օրհորդ չունի մշակութային

օջախների գծով:


Զնփուհու ոչ բոլոր համակուրսեցիներն ու ուսանողական ընկերուհիներն են իր նման առաջադեմ ու ժամանակակից, կյանքի իսկական իմաստը հասկացող: Կան այնպիսի, ովքեր ոչ մի կամ համարյա ոչ մի դաս բաց չեն թողնում, յուրացնում են հանձնարարված դասանյութը, կասարում դասախոսների բոլոր առաջադրանքները, ժամանակ սրամադրում ընթերցանությանը, մշակութային օջախներ այցելելուն: Զնփուհին եւ իր հոգեկից, խառնվածակից, գաղափարակից ընկերուհիները նրանց անվանում են գիր կրծողուհիներ, կյանքի իմաստը չհասկացող, հետամնաց, ոչ ժամանակակից աղջիկներ:

Տանը եղած ժամանակ օրհորդ Զնփուհին առանձնանում է իր սեմյակում. նպատակը՝ դասադասումը: Օրհորդը նորից ձեռք է առնում հեռախոսն ու համակարգիչը եւ սկիզբ են առնում սեւական ու հաճելի զույցներ ընկերուհիների, գարմուհիների եւ այլոց հետ, ադա՝ ժամերով զբոսանալ համացանցային անսահմանության մեջ՝ սիրելի երգերի ունկնդրում, սիրելի կինոների ակնդրում (Զնփու-

հին Զնփուհին չէր լինի, եթե բաց թողներ սիրելի, կամ, գուցե, դաւանելի սերիալները), իրեն առավել հոգեհարազատ երգերի ու կինոների ներբեռնում, սեղադրում, ծանոթություն սիրելի հայտնիների, հանրային դեմքերի կյանքին ու սկանդալներին՝ հույսով ու երազանով, որ մի օր ինքն էլ նրանց նման հայտնի կդառնա: Զնփուհին բնականաբար չի կարող անսարք լինել իր երկրում եւ աշխարհում սեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ. անդաման հետաքրքրվում է բիժուսերիայի, գալանսերիայի, կոսմետիկայի, դարձիւներիայի նոր տեսակներով (դրանք չափազանց կարեւոր են նրա համար, իմաստավորում են նրա կյանքը), նորածնությունների մորուքներով (նա ոչ մի դեղում հագուկադով ընկերուհիներից հետ չդիտի մնա), շոքերի մորուքը զարգացումներով (ներքին մեծ դադանք կա սեղակ լինելու մարդկային գործունեության՝ իրեն անչափ հազեհարազատ, ըստ իրեն՝ չափազանց կարեւոր բնագավառի բոլոր թարմ լուրերին ու բանաստեղծություններին): Եվ մի բան էլ, որ երիտասարդուհին անում է ոչ միայն օնլայն, այլեւ օֆլայն՝ հետաքրքրվում է՝ ով կամ առավել եւս ովքեր են իրենով հիանում, արդյո՞ ձեռնակափառ ձի հեծած ասպետ չկա՞:

Օրն ավարտվում է, ու՛ է արդեն. օրհորդ Զնփուհին դադանում է ֆուելու, վաղն ամեն ինչ նորից է սկսվելու, իսկ վերջնականակեցում՝ դիմումը նորից օժիշ բաղադրատարր, բարձրագույնագրական լինելու դասավոր համարում, որ ողջ մնացյալ կյանքում օգտագործելու է մերթ իբրեւ հաղթաթուղթ, մերթ իբրեւ հղատության միջոց, մերթ իբրեւ զուրավոր գեմ սկետրոջ դեմ մղվելիք հմարավոր ճակատամարտում, ինչպես նաեւ իրեն թերազնահատելու փորձ անողներին շոքելու գործում:

## Բաֆֆու «Խենթը»՝ Եվդոն



Եվդոնական «Ռուին» հրատարակչությունն օրես լույս է ընծայել հայ գրականության դասական գործերից Բաֆֆու «Խենթը»՝ **Լուսիա Ադամյանի** թարգմանությամբ, ՀՀ ԿԳՄՍ աջակցությամբ եւ Եվդոնայի թագավորությունում ՀՀ նախկին դեսպան **Արսակ Արիստանյանի** ջանքերով: Հասորի նախաբանը գրել են **Սթեֆան Վալվիլիսը** եւ **Կառլ Էրենբրունան**, որի մեջ ներկայացված են Բաֆֆու կյանքը եւ գործը, դասական ակնարկ վերցնում նկարագրված ժամանակաշրջանի մասին եւ ստեղծագործության նշանակությունը ժամանակի հայ ազգային-ազատագրական շարժման համար: Հասորում առկա է նաեւ ֆարսեղ եւ մեկնաբանություններ, որոնք կարևոր են հայոց դասնությունից եւ իրականությունից անսեղյակ Եվդոն ընթերցողի համար:

Ինչպես նեղ է թարգմանչուհին Դիմազրի իր էջում՝ «Ահա՛ թարգմանությունս, որը կասարեցի գրեթե հինգ տարի առաջ, երբ Արցախում ահավոր դաժնակներ էր: «Խենթը» անցած ժամանակների մասին է, եւ ես թարգմանության մեջ խորասուզված լինելով՝ մտածում էի, թե հիմա իսկապե՞ս ձիոս ժամանակն է այն թարգմանելու: Կան շատ ուրիշ բաներ, որոնք կցանկանայի ներկայացնել Եվդոն ընթերցողին: Բայց 1870-ականների տեմպի վրա աշխատելը եւ այսօր դաժնակների ու ցեղասպանության մասին հաղորդագրություններ կարդալն ինձ ստիպեց հասկանալ, թե որքան կարևոր է «Խենթի» դասնությունը»:

Լուսիա Ադամյանը ծնվել է Թեհրանում, բնակվում է Ուիսալայում (Եվդոնի), 1984-1988 թթ. ուսանել է Երեւանի դասական համալսարանի հայ

բանասիրության բաժանմունքում: Եվդոնայում երկար տարիներ աշխատում է գրադարանավարության բնագավառում: Նրա թարգմանությամբ լույս են տեսել հայերենից Եվդոներն 20-21-րդ դարերի 26 հայ արձակագիրների դասնակներն ընդգրկող «Բաց երկնի սակ հին լեռներ» ժողովածուն (2020), իսկ Եվդոներից հայերեն՝ Ասրիկ Լինդգրեմի «Ավազակի դուստր Ռոնյան» վիդակը (2023, համաթարգմանիչ՝ **Ալեյսե Բախչինյան**):

Ավելացնենք, որ մինչ այժմ Բաֆֆու «Խենթը» թարգմանաբար հրատարակվել է նաեւ ռուսերեն, թուրքերեն, վրացերեն, մոլդավերեն, չեխերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն (ամբողջական, հաճախ՝ մի ֆանի թարգմանություններով), ռումիներեն (հասկանալի):

ԳԵՂԱՍ ՄԿՐՏՉՅԱՆ

Գյումրի. երբ ընտրում ենք «ի հեճուկս»

1991 թվականին մասնաճյուղ Lորիս Գյումրիում... Եզմիածնից եւ փառաբանող Երեւանից փայլեցող հասարակական գործընթացներով, խիստ շարժառիթուն ու փոխազդեցիկ մեր հասարակության դիմագիծը: Խարխուլեց, խաբարվեց գաղափարական համայնական միասնականությունը: Գյումրի քաղաքում ընդհանուր սոցիալական շարժումները, բարոյական խելոններն ու անհասարակական մղումները, ներքին խմբակային շարժումները: Հասարակության դառնալից փոփոխությունները, իրականում ավելի շատ՝ ազգը բաժան-բաժան անող մանր շարժումները, «դրսից» սնվող հաճախ կասկածելի ծագմամբ ու առաջնությունը հասարակական եւ այլ կազմակերպությունների, կառույցների ստեղծումը եւ գործունեությունը, ազգային, կրոնական, բարոյական փայլալից աղանդների մուտք: Կրթական համակարգի եւ ժողովրդի կրթվածության մակարդակի ընդհանուր անկումը, արժեքների, երեւոյթների եւ անձանց գնահատման չափանիշների փոփոխությունը: Եվ այլն, եւ այլն: Առողջ մրցակցության փոխարեն հանրային անառողջ թեմաների սարժմանն է ծառայում նաեւ գործող ընտրական կարգը:

Եվ մեր շատ անհաջողություններ, թվում է, թայմանավորված են նաեւ նրանով, որ մասնավորապես իշխանությունը ձեռնարկելու է արդարացի վերջին հաշիվը փոփոխելու մասին: 1990-ականների սկզբներին Լեւոնականում ֆնարկում եւ ոչ թաւառական ստորագրահավաք եղավ, ընդունելի համարվեց ու սկսեց



գործածվել ֆաղափ ԿՈՒՄՍՅՈՒՍԻ սկզբնական անադարս անունը: Բայց ֆաղափային խորհրդի մասաւրջանում (կարայրդիսի մարմին՝ իր թասգամավորներով) ոմանք ֆաղափային միասնական հակադրվելու համար դեմ արտահայտվեցին եւ թախանջելով հասան նրան, որ հանրավե եղավ եւ կասկածելի կերպով անց կացվեց բնականային մի որոշակի թասմական ժամանակաւրջանը ներկայացրած թրախունչ Գյումրի տարբերակը, կարծես իրեւ անեծք մնալով ֆաղափս վրա...

Այդպէս 2018-ին ՀՀԿ իշխանութունից ժողովրդական դժգոհության այլի վրա խորհրդարանական փետարկութամբ իշխանության բերվեց Փաւիւնյան իր խմբով: Այդպէս անգամ արցախյան 44-օրյա թաստրազնում դաժան թաստրութունից հետո, 2021-ի արտահերթ խորհրդարանական ընտրութուններում կրկին նրա՝ այդ թաստրութան համար թաստախանասու իշխանութանը տրված ձայները ակնհայտորեն շատ դեմքերում տրվել էին ընդդէմ եւ ի հեճուկս վերադառնալ փորձող Ռոբերտ Զոչարյանի, նրա իշխանութան հնարավոր վերադարձի:

Սիւս այդպէս էլ Գյումրիում այս արտահերթ ընտրութանը մասնակցած 9 ֆաղափական ուժերից ու դաւիմներից 8-ի ընտրաթայրաի եւ հետընտրական

հայտարարված թայմանավորվածութունների գերխնդիրն ընդամենը այն էր, որ ԶԿ-ական իշխանութան թեկուզ անենաւաւս ձայներ տասցած թեկնածուն չդառնա ֆաղափաթէ: Եվ արդունքը հայտնի է: Այստեղ, իհարկե, խնդիրը նաեւ ընտրողների որոշակի մասի կողմնորոշումների հետ է կապված: Զոչարյան՝ այս դեմքում տեղի է տեսել, թէ յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր ընտրալին: Երբ մանավանդ ընտրութուն կատարելու առանձնաթէս մեծ հնարավորութուն էլ չի տեսնում:

Սոցիալական հարթակներում հայտատանյան հանրութունից (եւ ոչ միայն) ոմանք դրվատում են Գյումրու ընտրողին՝ ֆաղափում ԶԿ-ի իշխանութունը թույլ չտալու համար, ոմանք էլ անոթանք ու թուրումուր են տալիս՝ նկատի ունենալով ֆաղափաթէի թաստրոնին Հարդան Ռուկասյանի ուրվագծվող վերադարձի հանգամանքը: Ինչպէս հայտնի է, նոր ավագանու առաջին նիստում նրան ձայն տալ են խոտտացել այնտեղ անցած ուժերից երեքը:

«Վերադարձ դեմքի անցյալը. Գյումրին 20 տարով հետ գնաց», - այս կատակցութամբ գրում է Դիմագրի օգտատերից մեկը:


«Սեղավորը հիմար օրենքն էր, որի միջոցով չընտրվածները միավորվեցին եւ դարձան ընտրվածներ», - ասվում է մեկ այլ գրառման մեջ:

Իրականում օրենքի այս սկզբունքը ընտրողի հանդեմ մի տեսակ անարդար է տասցվում: Նրան կարծես ասում են՝ դու ինձ ֆո ձայնը տուր, հետո ես կորոշեմ՝ այն ինչ անել: Եվ այստեղ ընդհուր կարող է նաեւ մոռացվել՝ ինչի համար էր ընտրութունը:

2025.04.09

Յասմին Դում Թրագուրթ. «ժամանակն է, որ Հայաստանի ներկայացուցիչները՝ դիվանագետները, դեսպանությունները, եկեղեցիները խոսեն»

Երեկ հայկական մեդիան անդրադարձավ նույն օրը՝ ապրիլի 10-ին Վաշինգտոնի Գրիգորյան համալսարանում Ադրբեյջանի հրավիրած «Զրիսոնությունը Ադրբեյջանում. թասնութունն ու արդիականությունը» խորագրով միջազգային 12-րդ գիտատրոլվին, որի նթասակը հայկական հետքը ջնջելն է: «Սիւսվոր է, աթոած են ուղղակի, որ Վաշինգտոնում այսրդիսի գիտատրոլով է անցկացվում», մեզ հետ երեկ կայացած գրույցում զարմանքով եւ զայրույթով արտահայտվեց հայագետ Յասմին Դում Թրագուրթը, որ շտեքեց, թէ Յոս Գիդրթերը մերժել է հրավերը, չի մասնակցում Վաշինգտոնում կազմակերպվածին: Դում Թրագուրթի եւ Յոս Գիդրթերի համահեղինակութամբ 2023-ի հունիսին Գերմանիայում լույս էր տեսել «Կովկասյան Աղվանի» մասին միջազգային մեծածավալ ձեռնարկը: Գիտական միտքը կանգ չէր առել 2024-ին էլ՝ Բեռլինում, ի հեճուկս ադրբեյջանական խոչընդոտների, կայացավ Անդրես Մյուլլերի, Հարութուն Հարութունյանի, Դագմար Հելլերի, Մարին Տամբի «Արցախի մտակութային ժառանգութունը» հասորի շնորհանդեսը: «Ինչպէս է այսրդիսի հակագիտական միջոցառումը հնարավոր դառնում», մեր հարցին ի թաստախանաս Կասմին Դում Թրագուրթը արձագանքում է՝ «Այն, ինչ կատար-



վում է մեր աւիարիում, երեւակում է միայն մեկ բան՝ ով փող ունի, ո՛ւժ ունի: Հավանաթար հայագետներ, գիտականներ, որ ձմարտութան համար ենք թայրարում, ուժ ու ձայն չունենք: Ժամանակն է, որ Հայաստանի ներկայացուցիչները՝ դիվանագետները, դեսպանութունները, եկեղեցիները խոսեն: Ադրբեյջանը միջազգային մասնագետներին թող արտոնի Արցախ գնալ, իրենց՝ այսրդես կոչված «աղվանական եկեղեցիները» հետագոտելու,

դրա հետ մեկտեղ հնագիտական ու թասմական փաստերը թող ուտումնասիրեն», ասում է Կասմին Դում Թրագուրթը: «Ինձ համար անենասխուրն այն է, որ հենց Վաշինգտոնում է տեղի ունենում: Եթե ուզում են իսկական գիտատրոլով անցկացնել Հոռնում, Աղվանի ու աղվանական, ավելի ճիշտ՝ նոր ուղիական եկեղեցու հարցը ֆնարկել, թող ամբողջ աւիարից մասնագետներ հրավիրեն, լուրջ գիտականներին, ոչ թէ փողով գնվածներին: Թող հրավիրեն հայ մասնագետներին, չեզոք մասնագետներին եւ ադրբեյջանցի մասնագետների հետ ֆնարկեն հարցը: Աւիարիում հազիվ 20 հոգի լինի, որ ձմարիս ու ձգրիս հետագոտութուն են անում Աղվանի մասին», արաջարկում է «Կովկասյան Աղվանի» հասորի համահեղինակ Դում Թրագուրթը:

Կամերային երաժշտութային համերգ

Ապրիլի 16-ին՝ ժամը 19:00-ին Ֆրանկոֆոնիայի օրերի օրջանակներում, սիրով հրավիրում ենք ձեզ ունկնդրելու կամերային երաժշտութուն:



Երեւանի ամենաերաժշտական վայրերից մեկում՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի գեղեցիկ համերգասրահում ելույթ կունենան երիտասարդ, տաղանդավոր երաժիշտներ, միջազգային մրցութների դափնեկիրներ՝

Հոփսիմե Աղափարյանը (դաւնամուր), Սերգեյ Աբրահամյանը (կլաւնէտ):

Երեկոյի ընթացքում կինչի ֆրանսիացի դասականների նրաձաւակ ստեղծագործութունների բացառիկ մի ընտրանի՝ Կուրտերեն՝ Պիետներ, Ռավել՝ Արտացոլանքներ, Սեն-Սանս՝ Սոնատ կլաւնէտի եւ դաւնամուրի համար,

Պուլենկ՝ Սոնատ կլաւնէտի եւ դաւնամուրի համար, Ֆրանսե՝ Թեմա եւ վարիացիաներ կլաւնէտի եւ դաւնամուրի համար:

Հանդիսատեսը ընդմիջմանը հնարավորութուն կունենա նաեւ ծանոթանալու տուն-թանգարանի ցուցադրութամբ:

Տոնսի արժեքը՝ 3000 դրամ: Տեղերը սահմանափակ են: Տոնսերը վաձառվում են Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տոնսարկղում:

Տեղերի ամրագրման եւ մանրամասների համար՝ +374 10/ 52 26 91, +374 10/ 58 94 18:

Տոնսերը կարող եք թայրվիրել նաեւ առցանց՝ <https://www.tom-sarkgh.am/hy/event/46502/>

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի համերգասրահ (Հասցե՝ Զարոթյան 3):

